ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- օգոստոսի 2022 թվականի №---Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 20-Ի №311Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը, այդ թվում՝ կարգի 78-րդ կետը, կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետը և հաշվի առնելով «ԷՐԻԷՄ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2022 թվականի օգոստոսի 9-ի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Վեց ամիս ժամկետով երկարաձգել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի հուլիսի 20-ի «ՄՏՔԻ ԲԱՆԱԼԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «ՌԻՆԴ» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման լիցենզիա տրամադրելու մասին» №311Ա որոշմամբ «ՄՏՔԻ ԲԱՆԱԼԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված և հանձնաժողովի 2013 թվականի հուլիսի 31-ի «ՄՏՔԻ ԲԱՆԱԼԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության №0257 լիցենզիան վերաձևակերպելու մասին» №288Ա որոշմամբ «ԷՐԻԷՄ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության անվամբ որպես էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա վերաձևակերպված №0257 լիցենզիայով ամրագրված «Ռինդ» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը՝

ճշգրտելով նաև արտադրության ժամանակահատվածը, որոշման մեջ «մինչև 2022 թվականի սեպտեմբերի 25-ը» բառերը փոխարինելով «մինչև 2023 թվականի մարտի 25-ը» բառերով, իսկ «մինչև 2030 թվականի հուլիսի 25-ը» բառերը՝ «մինչև 2031 թվականի հունվարի 25-ը» բառերով:

2. «ԷՐԻԷՄ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ №0257 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով «Ռինդ» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝
   1) մեկամսյա ժամկետում «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության 2022 թվականի մայիսի 5-ի №652-4050 գրությամբ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացված ՀԲԵՆ22/119-01 երաշխիքի համաձայն երաշխավորված 5 080 000 (հինգ միլիոն ութսուն հազար) դրամ գումարից 2 540 000 (երկու միլիոն հինգ հարյուր քառասուն հազար) դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.
   2) քառասունհինգօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացնել 5 080 000 (հինգ միլիոն ութսուն հազար) դրամ գումարի երաշխիք՝ առնվազն մինչև 2023 թվականի մայիսի 9-ը գործողության ժամկետով:
3. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ պարտավոր է «Էներգետիկայի մասին» օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի «ա1» և «ա2» կետերի համաձայն՝ արտադրության լիցենզիա ստանալու համար հանձնաժողով ներկայացված փաստաթղթերի (այդ թվում՝ դրանցով ամրագրված իրավունքների) փոփոխության դեպքում նախապես, այդ մասին իրեն հայտնի չլինելու դեպքում տեղեկանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում, իսկ արտադրության լիցենզիա ստանալու, այդ թվում՝ արտադրության (վերակառուցման) ժամանակահատված ամրագրելու համար անհրաժեշտ իրավունքն օրենսդրությամբ սահմանված կարգով դադարելու դեպքում (այդ թվում՝ իրավունքը հավաստող փաստաթղթի գործողության ժամկետը չերկարաձգվելու դեպքում) այդ մասին տեղեկանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում տեղեկացնել հանձնաժողովին՝ ներկայացնելով փոփոխության հիմնավորումները և փոփոխված փաստաթղթերը:
4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

5. Սույն որոշումը սահմանված ժամկետում կամովին չկատարվելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022 թվականի սեպտեմբերի 25-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- օգոստոսի 2022թ.